ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի արտագնա նիստի

06.10.2022թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից Հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ կառավարության մի շարք որոշումների նախագծի մասին կարծիք ներկայացնելու մասին տեղեկատվության հաղորդում:
   - «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»
   - «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին»
   - «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը սահմանելու մասին»
   - «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին»
   - Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգի, գնահատման չափորոշիչներն ու գործիքները հաստատելու մասին
   - «Ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու մասին»:

   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. Տեղեկատվության հաղորդում «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության /նախագահ՝ Անուշ Ասլանյան/ «Լոռի շահերի պաշտպանություն նախաձեռնողական խումբ»-ի /ԼՇՊ/ կողմից իրականացված աշխատանքների մասին:
   - ✓ Ստեղծման նախապատմությունը, առաքելությունը, նպատակը, անդամները:
     /զեկ.՝ Սյուզաննա Գոգչյան - ԼՇՊ հիմնադիր անդամ/
   - ✓ Մեկ տարվա ընթացքում ԼՇՊ-ի կողմից իրակնացրած աշխատանքները:
     /զեկ.՝ Սերյոժա Գյուլազյան - ԼՇՊ հիմնադիր անդամ/
   - ✓ ԼՇՊ -ի կողմից իրականացված ճանապարհների մոնիթորինգ, մշտադիտարկման արդյունքերի ներկայացում:
     /զեկ.՝ Ռուբիկ Փարսադանյան, Հասմիկ Փելեշյան - ԼՇՊ հիմնադիր անդամներ/
   - ✓ EREO Անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի կողմից իրականացված ՇՊ գործողություններ՝ անձնական օգնականի տրամադրման ՀՀ կառավարության որոշման մասին:
     /զեկ.՝ Վահան Սարգսյան- EREO անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի շահերի պաշտպանության համակարգող/
   - ✓ EREOանկախ կյանքի ռեսուրս կենտրոնի կողմից մինչ օրս գրանցված հաջողություններ:
     /զեկ.՝ Հասմիկ Մխիթարյան EREO անկախ կյանքի ռեսուրս կենտրոնի տեղեկատվության և ուղղորդման համակարգող/:

3. Տեղեկատվության տրամադրում.
   - Լոռեցի ըմբշամարտիկներ Սենիկ Սերոբյանի և Ռոբերտ Գևորգյանի սուրդլիմպիկ նվաճման մասին
   - «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Ստեփանավանում գործող ճամբարային առօրյայի մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

4. Պարգևատրություն /Հանձնաժողովի անդամներ Սուսաննա Ապրեսյան, Անուշ Ասլանյան/
5. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վեց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Գրություն նախապատրաստել ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

- Առանձնահատուկ ուշադրություն հրավիրել սուբվենցիոն ծրագրերով շինարարական աշխատանքներ կատարելիս թեքահարթակների սահմանված չափորոշիչներով կառուցման գործին, այդ աշխատանքներին ներգրավել շահագրգիռ հասարակական կազմակերպություններին:
- Համայնքի տարածքում թեքահարթակների ապամոնտաժման, դրանց վերաձևման և մատչելի միջավայրի հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ մինչև գործողություն սկսելը տեղեկացնել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետին, իսկ որոշում կայացնելիս ներկայացնել հարցի վերաբերյալ կազմակերպված հանրային լսումների, կայացած քննարկումների, կազմված նախագծերի մասին հիմնավորումներ:

բ/ Նախապատրաստել գրություն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարին տեղեկատվություն ստանալու առաջարկով՝

✓ Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի Վանաձորի համայնքապետարանի կողմից քանդած թեքահարթակի փոխարեն խոստացած նորը նախագծելու և սեփական միջոցներով կառուցելու վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին: Նախկինում պաշտոնական գրությամբ նախա-զգուշացվել էր Վանաձոր համայնքի ղեկավարին, որ նախկին քանդված թեքահարթակի մետաղական կոնստրուկցիաները օգտագործել բացառապես թեքահարթակ կառուցելու նպատակով՝ ՀՀ Լոռու մարզպետարանի հետ համապատասխան լուծում գտնելուց հետո: Տեղեկացնել հիմա որտե՞ղ են գտնվում և արդյո՞ք հուսալի պահպանված են ապամոնտաժված թեքահարթակի կոնստրուկցիաները:

✓ Քննարկել առաջիկա ծրագրերում տեսողության խնդիրներ ունեցող մեծաթիվ բնակիչների ունեցող Վանաձորի Նաիրի 1, 5 շենքերի բակերի ասֆալտապատման հարցը:

✓ Նախկինում առաջարկված Վանաձորի Տիգրան Մեծ պողոտայի «Տաշիր-պիցցա» խանութի դիմացի փողոցի հետիոտնային անցումը վերականգնելու հարցի ինչպիսի ընթացքի մեջ է, նկատի առնելով այն հանգամանքը որ անվասայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողանում օգտվել գետնանցումից, քանի որ անցումները բավականին հեռու են գտնվում: Քննարկված հարցի վերաբերյալ ներկայացնել ՀՀ ոստիկանության դիրքորոշումը:

գ/ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյանին հետ կազմակերպել ՀՀ Լոռու մարզպետարանում առկա հաշմանդամություն ունեցող անձանց համար գույքի /անվասայլակ, քայլակ, արմնկահենակ/ և սոցիալական օգնության /օգտագործված հագուստ/ հանձնումը:

դ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետարանի կայք-էջում տեղադրելու համար:

2. Հանձնաժողովի անդամ ունեցող Հասարակական կազմակերպություններին՝

Կազմակերպության կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

3. Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աննա Գասպարյանին՝

Ապահովել աշխատանքների հրապարակայնությունը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Կազմեց՝ Վ.Ջաղինյանը /2-33-99/